# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 156


**№ 03/26-1/18992-2022**

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ

Հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 13.10.2022թ. N 1593-Ն որոշմամբ գնումների գործընթացի կազմակերպման կարգում կատարվել են փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 02/11/2022թ-ից:

Նշված փոփոխությունները չեն տարածվում մինչև 02/11/2022թ. սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

Կատարվել են հետևյալ հիմնական փոփոխությունները՝

1) գնումների պլանում փոփոխություններ և լրացումներ կատարելու լիազորությունը՝ ՀՀ կառավարության 04/05/2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ կարգ) 6-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պատվիրատուի ղեկավարի փոխարեն իրականացնում է մարմնի ղեկավարը: Ընդ որում՝

ա. «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ձևի կիրառման որոշումը ևս կայացնում է մարմնի ղեկավարը՝ առանց ՀՀ կառավարության որոշմամբ նման թույլտվություն ստանալու հանգամանքի: Բացակայում է նաև ի սկզբանե գնումների պլանում նախատեսված գնման մրցակցային ձևը ոչ մրցակցային ձևով փոխարինելու համար ՀՀ կառավարության որոշմամբ թույլտվություն ստանալու անհրաժեշտությունը:

բ. մարմնի ղեկավարի որոշմամբ է սահմանվում նաև, թե հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգը կազմակերպվում է էլեկտրոնային

գնումների համակարգի միջոցով, թե հրավերը տրամադրվում է միայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտում նշված անձին.

2) սահմանվել է, որ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով մեկ անձից գնման ձևով կարող են իրականացվել նաև այն գնումները, որոնց՝ գնման գինը չի գերազանցում 100 000 դրամը՝ անկախ գնումների միասնական անվանացանկի 2-րդ մակարդակի համաձայն հաշվարկված տրամաբանության: Օրինակ.

| Գնման առարկայի | | Գնման ձևը | Չափի միավորը | Միավորի գինը (դրամ) | Քանակը | Գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|---|
| միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | անվանումը | | | | | |
| **ապրանքներ** | | | | | | **1125.0** |
| 30197622 | թուղթ A4 ֆորմատի | ԷԱՃ | կգ | 800 | 1000 | 800.0 |
| 30199420 | թուղթ նշումների համար, սոսնձվածքով | ԷԱՃ | հատ | 150 | 1000 | 150.0 |
| 30199792 | օրացույցեր | ՄԱ | հատ | 1000 | 100 | 100.0 |
| 30197331 | դակիչ մեծ | ՄԱ | հատ | 2500 | 30 | 75.0 |
| **աշխատանքներ** | | | | | | **950.0** |
| 45231113 | խողովակների փոխարինման աշխատանքներ | ՄԱ | դրամ | 150 000 | 1 | 150.0 |
| 45231125 | ոռոգման աշխատանքներ | ՄԱ | դրամ | 800 000 | 1 | 800.0 |
| **ծառայություններ** | | | | | | **1000.0** |
| 50111170 | ավտոմեքենաների պահպանման ծառայություններ | ՄԱ | դրամ | 1000 000 | 1 | 1000.0 |
| **Ընդամենը** | | | | | | **3075.0** |

3) նախատեսվել է, որ՝

ա. եթե էլեկտրոնային աճուրդի ձևով կազմակերպված գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվում օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով, ապա տվյալ գնումը կարող է կատարվել գնման այլ ընթացակարգով՝ հաշվի առնելով տվյալ գնման ձևի կիրառման համար սահմանված պահանջները.

բ. եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիմքով և տվյալ գնման համար պլանավորված կամ կանխատեսվող գնման ընդհանուր գինը գերազանցում է 25 մլն դրամը, ապա հրավերով նախատեսվում է, որ մասնակիցները ներկայացնում են նաև հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Պայմանագիրը կնքված անձին հայտի ապահովումը վերադարձվում է տվյալ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում համաձայնագիրը կնքվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է տվյալ գնման համար պլանավորված կամ կանխատեսվող

գնման ընդհանուր գնի 5%-ին: Եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման ընդհանուր գինը, ապա հայտի ապահովման չափը հավասար է գնային առաջարկի 5%-ին.

գ. գնման ընթացակարգը օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կազմակերպվելու դեպքում կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետի հաշվարկը սահմանվում է օրացուցային օրերով՝ հաշվարկն իրականացնելով ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքվելիք համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Եթե պայմանագրի կատարման համար տվյալ տարում նախատեսված չեն կամ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, քան պայմանագրի ընդհանուր գինն է, ապա պայմանագրում նախատեսվում է, որ յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից.

դ. ապրանքների գնման հայտը նախագծելիս, եթե տեխնիկական բնութագրերում պետք է օգտագործվեն հղումներ, ապա դրա փոխարեն սահմանվում են պատվիրատուի կարիքի բավարարման տեսակետից որպես համարժեք համարվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը: Սույն կետի կիրառման դեպքում հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերի տեխնիկական բնութագրերում նշված ապրանքները.

ե. ծրագրային ապահովման մշակման (սպասարկման) և մասնագիտական վերապատրաստման ծառայությունների գնման ընթացակարգը կազմակերպվում է խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված կանոններին համապատասխան (օրենքի 44-րդ հոդված): Ընդ որում սույն ենթակետի կիրառման դեպքում կարող է չկիրառվել նախաորակավորման ընթացակարգ.

զ. գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ վարվում է միայն այն դեպքում, երբ հրավերին պահանջներին բավարար գնահատված մասնակիցները ներկայացրել են նվազագույն հավասար գնային առաջարկներ: Ընդ որում բանակցությունների հրավիրվում են միայն նվազագույն հավասար գնային առաջարկներ ներկայացրած մասնակիցները: Եթե բանակցությունների արդյունքում մասնակիցների ներկայացրած գները մնում են հավասար, գնման ընթացակարգն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած.

է. եթե մասնակցի գնային առաջարկը գերազանցում է գնման գինը, իսկ ընթացակարգը օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմնա վրա կազմակերպված լինելու դեպքում գնման համար պլանավորված կամ կանխատեսվող գնման ընդհանուր գինը, ապա վերջինս գնահատող հանձնաժողովի որոշմամբ կարող է ճանաչվել ընտրված մասնակից: Սույն ենթակետը կիրառելի չէ, եթե ընթացակարգին, իսկ չափաբաժիններով կազմակերպված լինելու դեպքում տրվյալ չափաբաժնին  հայտեր ներկայացրել են մեկից

ավելի մասնակիցներ և գնահատման արդյունքում միայն մեկ մասնակցի հայտն է գնահատվել բավարար.

ը. մասնակցի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման: Ընդ որում հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.

թ. գնման ընթացակարգը երկու փուլով մրցույթի ձևով կազմակերպվելու դեպքում՝ մասնակիցների հայտերի գնահատման չափանիշները, դրանց տրվող նվազագույն և առավելագույն միավորները, ինչպես նաև մասնակցին ներկայացվող որակավորման չափանիշներն ու դրանց գնահատման համար հայտով ներկայացվելիք փաստաթղթերը սահմանվում են պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ գնման հայտով:

Երկրորդ փուլի հրավեր տրամադրվում է միայն առաջին փուլի հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին: Երկրորդ փուլի հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում բացվում են մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

Կրճատվել են նաև նշված գնման ձևի կազմակերպման համար նախատեսված ժամկետները:

ժ. պայմանագրի գինը կարող է լինել գործոնային, եթե պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվում, ծառայությունները մատուցվում և աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից մեկ տարին գերազանցող ժամանակահատվածում՝ միայն մեկ տարին գերազանցող ժամանակահատվածի համար պայմանագրով նախատեսված գների փոփոխության հնարավորությամբ.

ժա. յուրաքանչյուր առանձին դեպքում, հիմնավորելով գնման գործընթացի առանձնահատկությունը, պատվիրատուն կարող է դիմել ՀՀ կառավարությանը (սահմանված կարգով ներկայացնելով համապատասխան որոշման նախագիծ)՝ հայցելով վերջինիս թույլտվությունը՝ գնումն իրականացնել առանց կարգով սահմանված պայմաններից մեկի կամ մի քանիսի պահպանման՝ կիրառելով կամ չկիրառելով դրան փոխարինող այլ պայման (պայմաններ): Այս դեպքում, ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով գնման գործընթացի առանձնահատկությունը, կարող է որոշում կայացնել, թույլատրելու պատվիրատուին կազմակերպելու գնման գործընթացը՝ առանց կարգով սահմանված պայմաններից մեկի կամ մի քանիսի պահպանման, անհրաժեշտության դեպքում, կիրառելով դրան փոխարինող այլ պայման (պայմաններ):

Սույն ենթակետը չի վերաբերում ինչպես կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «թ» պարբերությամբ և 43-րդ կետով նախատեսված, այնպես էլ այն դեպքերում, երբ պայմանը (պայմանները) սահմանված է օրենքով կամ բխում է օրենքի պահանջից:

Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված պայմանը կարող է կիրառվել, եթե հրապարակված կամ մասնակցին տրամադրված չէ հրավեր, բացառությամբ գնումն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա կազմակերպվելու դեպքի.

ժբ. յուրաքանչյուր առանձին դեպքում, հիմնավորելով պայմանագրի կատարման և (կամ) կառավարման առանձնահատկությունը, պատվիրատուն կարող է պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ընթացքում դիմել ՀՀ կառավարությանը (սահմանված կարգով ներկայացնելով համապատասխան որոշման նախագիծ)՝ հայցելով վերջինիս թույլտվությունը պայմանագրում կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններից տարբերվող պայմաններ սահմանելու կամ սահմանված պայմանները չկիրառելու համար: Այս դեպքում, ՀՀ կառավարությունը, հաշվի առնելով պայմանագրի կատարման և (կամ) կառավարման առանձնահատկությունը, կարող է իր որոշմամբ թույլատրել սահմանել պայմանագրում կարգի 56-րդ կետով նախատեսված պայմաններից տարբերվող պայմաններ կամ չկիրառել սահմանված պայմանները:

Սույն ենթակետը չի վերաբերում այն դեպքերին, երբ պայմանը սահմանված է օրենքով կամ բխում է օրենքի պահանջից:

Հայտնում ենք նաև, որ՝

- նշվածով պայմանավորված փոփոխություններ են կատարվել նաև գնման ընթացակարգերի կազմակերպման ընթացքում օգտագործվող գնման հայտարարությունների և հրավերների օրինակելի ձևերում (procurement.am հասցեով գործող տեղեկագիր՝ «Օրենսդրություն» բաժնի «Փաստաթղթերի օրինակելի ձևեր» ենթաբաժի, նաև ռուսերեն լեզվով).

- օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով կազմակերպված գնման գործընթացի շրջանակում եթե գնման գնից պակաս գնով է կնքվում պայմանագիրը, ապա յուրաքանչյուր անգամ ֆինանսական միջոներ նախատեսվելու դեպքում (եթե նախատեսված ֆինանսական միջոցները գերազանցում են 25 մլն դրամը)՝ պայմանագրի և որակավորման ապահովումների՝ բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով փոխարինման դեպքում պետք է հաշվի առնել դրանց փաստացի կշիռը (տոկոսը) կնքված պայմանագրի գնի նկատմամբ: Օրինակ, եթե գնման գինը կազմում է 100 մլն դրամ, իսկ դրա արդյունքում կնքված պայմանագրի գինը՝ 65 մլն դրամ, ապա 40 մլն դրամ ֆինանսական միջոցներ հատկացվելու դեպքում որակավորման ապահովումը պետք է փոխարինվի 18 461 538 դրամի չափով (պայմանագիրը կնքելիս տուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը կազմում է 30 մլն դրամ, որը կազմում է պայմանագրի գնի՝ 65 մլն.-ի 46,153846 տոկոսը, իսկ 40 մլն.-ի 46,153846 տոկոսը կազմում է 18 461 538 դրամ).

- էլեկտրոնային աճուրդի ձևով կազմակերպված այն ընթացակարգերը, որոնք չկայացած են հայտարարվում բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները նախահաշվային գինը գերազանցելու հանգամանքով պայմանավորված և այդ հայտերը ավտոմատ կերպով մերժվում են համակարգի կողմից, ապա տվյալ դեպքում չի կիրառվում անգործության ժամկետ.

- ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացվող՝ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատճառաբանված որոշումը պարունակող գրության մեջ անհրաժեշտ է պարտադիր նշել այդ որոշումը մասնակցին տրամադրելու գրության ամսաթիվը և համարը:

11/2/2022

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Ա. Աղաջանյան
Հեռ. (011) 800 258